

ԸՆՏԱՆԻՔԸ ԵՒ ԴՊՐՈՑԸ

(Դասախօսութիւն, կարդացւած 20-ն մայիսի 1893 թ. Վարժուհիների եւ Դաս-
տիարակչուհիների Ընկերութեան մէջ Թիֆլիսում):

ՍՈՖԻԱ ԵՐԿԱՅԵԱՐԱԶՈՒԿ-ԱՐԴՈՒԹԵԱՆԻ

(Շարունակութիւն եւ վերջ¹⁾)

II

Դ Պ Ր Ո Ց Ը

Ինչ թուում է թէ ամեն մի երեխայի նոյնքան անհրաժեշտ է
դպրոցը, որքան եւ լաւ ու առողջարար սնունդը: Ինչպէս առողջ
սնունդով երեխան ամրանում է ֆիզիկական եւ առողջութեան հիմքն
է դնում, այնպէս էլ դպրոցը նրան հնարաւորութիւն է տալիս
ամրացնել բարոյական եւ մտաւոր կողմերը եւ նրանով հիմք է դնում
ապագայ քաղաքացու եւ հասարակական գործիչի համար: Ես կար-
ծում եմ, որ ով չի փորձել դպրոցական կեանքը, նա չի կարող
լաւ հասարակական գործիչ դառնալ: Դպրոցը պէտք է շարունակի
ծնողների սկսածը, եւ դպրոցական գործը այնպէս պէտք է դրւած
լինի, որ ընտանիքից դպրոց անցնելը երեխի համար շատ զգալի
չլինի: Սկզբնական դպրոցի առաջին եւ զլխաւոր կոչումը հէնց
նրանում պիտի կայանայ, որ, ընտանիքից յետոյ, ուր խիստ կար-
գասպահում թիւն (դեսցիպլինա) չէր պահպանւում եւ ուր երեխան

¹⁾ Տես «Մուրճ» № 7—8:

«Իւրաջիններից» դուրս ոչոքին չէր ճանաչում, նա նախապատ-
րաստւելի աւելի բարձր դպրոցը մտնելու: Դպրոնումն է, որ երեխի
առաջ նկարւում է հանրաջին կեանքի պատկերը: Առաջին անգամ
նա տեսնում է կազմակերպւած, պատւիրած, նախադիտած մի կարգ:
Մեզնից ով չի յիշում դպրոցական առաջին տպաւորութիւնները?
Ով մեզնից չի վրդովւել առաջին անգամ մերձենալով այն խորհրդա-
ւոր շինութեանը, որ այնքան ախորժելի և լաւ բաներ էր խոստա-
նում, կամ որը այնքան սարսափելի էր թւում: Երեխի ամբողջ
տրամադրութիւնը, դպրոցը մտնելիս, կախւած է ծնողներից, Եթէ
քիչ է մնում որ օրորոցից արդէն կրկնեն թէ սպասիր, կը տանք
ուսումնարան, այնտեղ քեզ ցոյց կը տան, — այն ժամանակ, ի հարկէ,
խեղճ երեխերքը արդէն միմիայն դպրոց խօսքից այնպիսի սարսափի
մէջ են ընկնում, որ մարդու ցաւն է դալիս նրանց վրայ նայել
անգամ:

— Ինձ շատ է ասել մայրիկը (պատմում է իմ սաներից մէկը),
թէ չես ուզում այս բանն անել, ես քեզ էգուց և եթ ուսումնարան
կը տամ: Ինձ չէր կարելի ուրիշ բանով վախեցնել քան ուսումնարանով:

— Ինչո՞ւ, հարցնում եմ ես:

— Էնդուր որ տանը մի զւարճութիւն ստացած ժամանակ, թէ
մայրս թէ հայրս իսկոյն վրայ են բերում թէ ճիշտ, Սաշա, դպրո-
ցում այդ քեզ չեն թողնիլ. եթէ այնտեղ քո քէֆի բաներ անես,
կամ քեզ տուն գալ չեն թողնիլ, կամ կը փակեն մութը կարցե-
րում: — Ես յիշում եմ այն երեկոն, երբ մայրիկս հայրիկի հետ
վճռեցին յաջորդ օրը ինձ ուսումնարան տանել: Երբ հայրիկս դուրս
եկաւ սենեակից, ես ընկայ մօրս վզին և աղաչում-պաղատում էի
ինձ ուսումնարան չուղարկել:

— Ձի կարելի, չի կարելի, մատաղ, դու պէտք է ամեն բանի
սովորես, պատասխանեց ինձ մայրիկս:

Ան ամբողջ գիշեր ես չկարողացայ քնել: Ինձ թւում էր թէ
ծնողներս ինձ այլ ևս բոլորովին չեն սիրում ու ուզում են շուտով
ինձնից ձեռք վերցնել: Գիշերը ես դել էի տալիս և սարսափելի
երազներ էի տեսնում, թէ իբր ես երեխաների մէջ եմ, որոնք ամեն
կողմից ինձ վրայ են յարձակւում, ինձ կոխոտում են, կրծոտում
և այլն:

Եւ իրօք ես յիշում եմ առաջին Ֆրազը, որ արտասանեց նա դպրոցը մտնելիս՝

—Էհ ես ձեզնից չեմ վախենում!

Տւեցին զանգը դասատուն մտնելու:

—Դէհ, Սաշա, կերթան դասատուն?

—Ոչ, ոչ, որ սպանէք չեմ գնալ: Լսել չեմ ուզում և երբէք դասատուն չեմ մտնիլ!

—Էհ, թէ որ չես ուզում, օկի հարկաւոր էլ չէ: Մնացիր այստեղ, թէ որ սիրտդ այդպէս է ուզում:

Դասատուն մտնելուց առաջ ես նրան տալիս եմ Շուբերտի «Կենդանիների թագաւորութիւնը» և, իբր ծանօթի, ասում եմ՝ «Սաշա, հոգիս, այս գիրքը պահիր, մինչև որ դասատնից ես դուրս կը գամ, կամ տար վերև ու դիր սեղանիս վրայ»: Երեխան վերցնում է գիրքը առանց խօսք ասելու և մի կողմ է քաշում: Անցնում է մի քանի րոպէ, և Սաշան կամաց-կամաց մօտենում է դասարանին: Սկզբում ներս է նայում պատուհանից, յետոյ մերձենում է դռան, և յետոյ տես թէ ինչպէս մեր Ֆիլոսոֆան կամաց քայլերով մօտենում է սեղանին:

Բայց պատահում է և աւելի վատը: Երբեմն այնպիսի բղաւոցով ու աղմուկով են ներս բերում երեխին, որ մարդ կարող է մոռանել թէ նրան մօրթում են:

«Լսեցէք, թէ որ դուք բարի էք, թէ որ դուք լաւ էք, թողէք որ տուն գնամ», բղաւում է նա որքան ոյժ՝ պատում է, թաւալելով գետնի վրայ և ոտները թափութափ տալով:

Յաճախ հէնց ծնողներն են ստիպւած լինում առւժել իրանց սխալների համար: Յիշում եմ որ մի երեխայ ամենևին չէր կարողանում ընտելանալ ուսումնարանին: Նա իւր մօրաքրոջը, որ 50-ին մօտ կին էր, այսպիսի պայման էր դնում. «Թէ որ դու հետս կը նստես դասատան մէջ»,—ես էլ կը նստեմ: Կը հաւատա՞ք որ այդ կինը ստիպւած եղաւ մի ամբողջ ամիս երեխաների հետ միասին դասատանը նստել?!

Զարմանալի է որ ծնողները չեն խոստովանում որ, այդպէս վախվախեցնելով, նրանք խանգարում են երեխաների առողջութիւնը և դանդաղեցնում են ուսուցչի ու երեխի գործը: Ախար որքան

կռիւ է հարկաւոր, մինչև որ երեխան բոլորովին կընտելանայ!

Միւս կողմից, որքան դուրեկան է տեսնել, որ երեխան չի նախապաշարւած ամեն տեսակ հեքիաթներով դպրոցի մասին և չի ղինւորւած դպրոցական բոլոր կարգերի դէմ: Որքան սիրուն ժպիտով նա խոնւում է երեխանների ամբոխի մէջ և ինչ հաճութեամբ նա տնտղում է նոր դէմքերը ու նոր կարգերը: Ամենաչին մի բան, երեխանների հանաքները, ուսուցչի կամ վարժուհու նկատողութիւնը, այդ բոլորը նրա դէմքին ժպիտ է բերում:

—Պետեա, ասում է չորս տարեկան երեխան իւր մեծ եղբօրը, ուրախութիւնից թռչկոտելով. գիտե՞ս, ինձ ընդունեցին. ես մտայ!

Պէտք էր տեսնել թէ որքան հանդիսաւոր կերպով նա մտաւ դասատունը և բարձրագոյն յայտարարեց՝—«Ես դեռ կը տեսնեմ թէ դուք ինչ էք անում, իսկ ջետոյ ես էլ կը նստեմ»:

Այո, ուրախութեան բաղդաւոր և անփոխարինելի զգացմունք ուսումնարան մոնելիս:

Ախար չէ որ այդ փոքրիկ մարդը պէտք է ձեռք վերցնի բոլոր եսասիրական զգացումներէ, հէնց որ դպրոցը մտաւ: Նա մի փոքրիկ քաղաքացու իրաւունք է ստանում: Նա պէտք է ուրախանայ և վրդովւի ոչ միայն իրա համար, այլ և ուրիշների համար:

Շատ անգամ հարց են տալիս թէ ուսումնարանը պէտք է արդեօք բարոյակրթական նպատակներ դնի իրան:

Լաւ կազմակերպւած դպրոցը, ասում է Շմիտ, պէտք է իրան նպատակ դնի փոքրիկ էակներին սովորեցնել ժամանակի և տեղի կարգը, կրթի աշխատանքի ընդունակութիւնը, մտցնի ընկերակալութեան, աշխատող մարդու և ընկեր-մարդու գաղափարները:

Անկասկած է որ դպրոցը չի կարող ունենալ այնքան լայն ազդեցութիւն երեխի վրայ, որքան ընտանիքը և շրջապատը, բայց և այնպէս նա ահագին նշանակութիւն ունի մարդու կեանքի համար: Քիչ է պատահել որ դպրոցը համարեա վերաստեղծել է երեխաներին, տւել է նրանց առողջ ուղղութիւն և մինչև անգամ իւր բարերար ներգործութիւնով թափանցել է ընտանիքի մէջ և վերաստեղծել է նոցա շրջապատը:

«Մեր դործն է երեխաներին գիտութիւններ տալ, ասում են մի քանի մանկավարժներ. իսկ կրթութիւնը—ծնողների դործն է»:

Իսկ եթէ ընտանիքը չի կրթում? Եթէ նա, զգալով իւր անկարողութիւնը, ուղղակի յայտնում է՝ թէ լոր կարողանամ ինքս կրթել, ձեզ չէի տալ երեխիս, նրան ինձնից չէի կորիւր:

Ոչ, այժմ մեր հասարակական պայմանների մէջ և ներկայիս ընտանիքների սկզբունքներով, ինձ թւում է թէ դպրոցը իւր վրայ պէտք է առնի կրթութեան գործը: Դպրոցում ոչ միայն պէտք է արթնանան բարոյական հասկացողութիւնները, այլ և զարգանան և ամրանան սրանք:

— Երբէք չեմ մոռանալ այն սրտալի և անկեղծ զրոյցները, որ մենք անում էինք մեր ուսուցիչ-դաստիարակ Կ.-ի հետ, պատմում է երիտասարդ մանկավարժներից մէկը: Եւ ինչպէս օտարուդի կերպով կցւեց մեր բարեկամութիւնը: Առաջ նա ինձ հետ այնպէս էր, ինչպէս բոլոր միւս աշակերտների հետ. բայց մի գէպք մեզ իրար մօտեցրեց: Ես 15 տարեկան էի և չորրորդ դասատանը ու ես ինձ արդէն չափահաս մարդ էի կարծում: Ես ոչ-աղքատ ծնողների որդի էի, շատ երես տւած: Առհասարակ պէտք է ասած որ ամբողջ ընտանիքը մի խառնուփնթոր բան էր ներկայացնում: Հայրս մի զարհուրելի հրէշ ու բռնակալ էր. մայրս թույլ, ծուլ և բնաւորութիւնից գուրկ մի կին, որը ոչ մի նշանակութիւն չունէր տան մէջ: Ես, իբր անդրանիկ տղայ, պարտք էի համարում ամեն բանում հօրս հետեւել և նրա օրինակով ես բռնութիւններ էի գործ դնում եղբայրներիս ու քրոջս վրայ: Աւելորդ եմ համարում թւել իմ բոլոր մոլութիւններս, որոնք հետեւեց էին մեր ընտանիքի սանձարձակութեան, կ'ասեմ միայն, որ ես 14 և նոյն իսկ 13 տարեկանից սկսած իմ պարտքն էի համարում ժամանակիս մեծ մասը տանից դուրս անցկացնել՝ բուլւարում, Մուշտաչիւում, ըեստորանում, երեկոյթներում և այլն: Կը հաւաքէինք ընկերներովս ամբողջ խմբով, և չափիւր ու չափիւր փողոցները! Մի անգամ, ինչպէս պատահեց, երեկոյեան ժամը 7-ին, չնկատելով իմ ետեւից հսկող դաստիարակիս, մտաչ ըեստորան բիլեարդ խաղալու: Նոր էի պատրաստուել խաղը սկսելու, և յանկարծ բացւում է դուռը և, ո՛հ սարսափ, դաստիարակս առջևս կանգնած: Կիցը (խաղալու փայտը) դէն գցեցի ու փայտ կտրած մնացի: Ել ինչպէս անեմ, ուր գնամ, մտածում եմ ես: Իսկ նա, բոլորովին հանգիստ, կարծես ինձ համար

չէր ներս մտել, մօտեցաւ. ինձ ու հարցրեց, — իսկ դու խաղալ գիտես? — Ես լսում եմ և արձանի նման մնում եմ կանգնած:

— Բանդ ինչ է կտրել, որ այսպիսի կեղտոտ տեղեր ես մտնում, ասում է նա:

— Ես... միայն այսօր, ասում եմ ես, դողից բռնւած:

— Դէ գնանք, գնանք այստեղից: Եւ թեւանցուկ բռնած նա ինձ դուրս տարաւ ընտորանից: Մենք դուրս եկանք փողոցը:

— Ներեցէք, Կ. Դ., ես այլ ևս երբէք չեմ անիլ. գիտեմ, որ այսօրուայ համար ինձ հասնելու է:

— Դէ սրանից աւելի վատ չի լինելու, ասաց նա ծիծաղելով, բայց այնպէս որ դող անցկացաւ մարմնովս:

— Իսկ հիմա ուր պիտի գնաս. բուլւար, թէ նորից ընտորան? Աւելի լաւ է գնանք մօտս թէչի, ասաց նա ու տարաւ հետը:

Ճանապարհին ես մտածում էի թէ տունս քանդուեց, Բայց հէնց որ դաստիարակիս տունը մտայ, նրա ընտանիքը, երեխաները, համեստ սարք ու կարգը ինձ վրայ կախարդիչ տպաւորութիւն արեցին:

— Տէր-Ասուած, մտածեցի ես, տեսնելով նրանց ընտանեկան բաղդաւորութիւնը և հանգստութիւնը, ինչ անդունդ այս տան ու մերի մէջ: Մենք թէչ խմեցինք, խօսեցինք, և այդ ամենը այնքան պարզօրէն որ կարծես ոչինչ չէր պատահել:

Թէչից յետոյ նա տարաւ ինձ իւր կաբինէտը և երկար-երկար խօսեց հետո: Իւր խօսելու բնական ձևով նա միանգամից տրամադրեց ինձ դէպի ինքը և դրդեց ինձ դէպի ճիշդ խոստովանութիւն: Ժամը 10-ն էր, որ ես նրանցից դուրս գնացի:

Կարծես յանկարծ վերածնւեցի: Ես ուզում էի շուտ հասնել տուն ու ամենքի, ամենքի վզովն ընկնել:

Հայրս ինձ հանդիպեց յիշոցով, ըստ սովորականին, իսկ ես, որին բաւական էր մի խօսք ասել՝ տասը ստանալու համար, — ես լռեցի: Գլխումս ամեն ինչ խառնւեց, ես չէի կարող որ և է բանի վրայ մտածել, բայց սիրտս այնպէս հանգիստ էր, այնքան լաւ էր! Յաջորդ օրը ես գնացի ուսումնարան բոլորովին այլ տրամադրութեամբ: Ուսուցիչը ներս մտաւ լուրջ, յօնքերը կիտած, թէև դասը բաւական ուրախ անցաւ: Դասից յետոյ, կորիւրդով անցնելով, նա ժպտաց և զլուխ շոյեց: Այդ ժպիտը ինձ շատ բան ասաց:

Այդ օրից ես սկսեցի յաճախել նրա մօտ։ Մեղանում սկսեցին չաբաթ օրւայ երեկոյթներ և ամեն տեսակ խօսակցութիւններ թէ դասարանի մէջ և թէ նրա տանը։ Ես նպատակ դրեցի զբաղւել մեր ընտանիքի հետ, պատրաստել քրոջս և նրան դուրս բերել ագիտութեան գրութիւնից։ Քոչքս այժմ անկախ անձն է, և ընտանիքը կարող է շատ բարեկիրթ տուն համարւել։

Այո, 16 տարեկան հասակում զրկւելով հօրից, նա իւր տան գլուխ անցաւ։ Առանց չափազանցի կ'ասեմ, որ հիմա նա կարող է օրինակելի հայր և օրինակելի դաստիարակ լինել։

Մեծ ցաւով պէտք է ասեմ, որ այժմ համեմատապէս քիչ են այդպիսի դաստիարակներ կամ դաստիարակչուհիներ, որոնք հետաքրքրւէին երեխի ներքին աշխարհով. դաստիարակներից, մարդ թէ կ'ին, ամեն մէկը իրօք այն հայեացքն ունի թէ մեր դործը միայն գիտութիւն տալն է, և իրան մի քանի քաջլ հեռու է պահում սանից։

—Գիտես, մամա, այսօր առաջին անգամ ժպտաց մեր ուսուցիչը, պատմում է աղջկիւր իւր մօրը։

—Զարմանալի է թէ ինչու ես ոչ մի բանի մասին չեմ կարող խօսել Կ-ի հետ. ես բոլորովին ինձ կորցնում եմ և համր եմ կլտրում, երբ նրան հանդիպում եմ որ և է հասարակութեան մէջ, պատմում է կուրսը նոր աւարտած մի պատանի։

Պատահում է նաև, որ դպրոցը ոչ միայն չի ուղղում երեխի պակասութիւնները, այլ և կոպիտ հալածանքով և անուպքո վարմունքով կրկնապատկում է նրա պակասութիւնները և չարացնում է նրան նախ ուսումնարանի, ապա և ամբողջ մարդկութեան դէմ։ Մտղների և մանկավարժների բոլոր անհեթեթ պահանջները սկսւում են երեխի ուսումնարան մոնելու օրից։ Մէկ կողմից՝ ծնողների անկարգ պահանջները և անհասկացողութիւնը դպրոցի նշանակութեան մասին. միւս կողմից մանկավարժների անտաքտութիւնները։

Մտղների պահանջների մասին ես արդէն նկատեցի յօդաձիս առաջին մասում։ Իսկ ինչ մանկավարժներին է վերաբերում—նրանք շատ յաճախ անտես են առնում երեխի անձնաւորութիւնը։ Զի կարելի մերձենալ երեխին կրթութեան միւլնոցն տեսակ ձևերով. մէկի վրայ ագիւում է շոցելը, միւսի վրայ՝ խստութիւնը. մէկի հետ ամեն

ինչ կանես զիջողութիւնով, միւսի վրայ կը ներգործէք միայն հաստատակամութիւնով: Աշխոյժ և դիւրագգաց երեխայից կարելի է դուրս բերել ոչ դքի վրայ չվստահացող ու յամառ երեխայ և սպանել նրանում ամեն լաւ բան, որով բնութիւնը նրան օժտել է: Լուրջ, խորհող, զարգացած երեխին այնպէս կարելի է խելքից հանել անհեթեթ պահանջներով, որ նա կը դառնայ ցրած, անուշադիր, անտարբեր, և դրա հետ միասին կը կորչեն նրա մտաւոր ընդունակութիւնները, կը փչանայ բնաւորութիւնը, կը թուլանայ կամքն ու եռանդը:

—Գիտէք, ինձ շատ ծանր է գալիս, որ իմ որդու մէջ մշակւել են ինչ որ օտարոտի հայեացքներ մարդկանց վրայ, զանգառում է ինձ կրթած հայրերից մէկը: Համաձայնեցէք որ մեր ընտանիքը ամեն բան անում է, որ երեխաների կամքը չձնչւի և նրանք հոռետեսներ չդուրս գան: Ես դրականապէս գալիս եմ այն եղբակացութեան, որ դպրոցն է նրանց վրայ այդպէս ազդելու: Ինչպէս էք հաւանում այն, որ նա իւր մօրը այսպիսի բան է յայտնում:

—Մայրիկ ջան, ինձ թւում է թէ վարժուհիները, դաստիարակները, ուսուցիչները այնպիսի մարդիկ չեն ինչպէս ամենքն են: Նրանք չգիտեն հանաք անել, ուրախանալ, խօսել ուրիշների պէս: Ամենքն էլ ինչ որ տոգոր և բարկացկոտ մարդիկ են, կարծես ամեն բան, որ կայ, ուրիշ տեսակ պէտք է լինի: Երբէք չեմ յիշում թէ մեր ուսուցիչը մեզ հետ խօսէր կամ ծիծաղէր: Երբեմն կ'ասի թէ՛ դէ լաւ կորիր—բաց այն ձեռով, որ վախենում ես թէ իրօք չկորչես աշխարհքի երեսից:

Եւ կամ զանգառում է ձեզ մի մայր.—երեխաների պատճառով ես չեմ կարողանում որ և է տեղ գնալ, զրկում եմ ինձ ամեն բանից, հեռացնում եմ նրանց աւելորդ խօսակցութիւններից ու վէճերից, աշխատում եմ առողջ ուղղութիւն տալ նրանց, տեսնելով նրանց մէջ միայն ուրախը և լուսաւորը: Իսկ դպրոցից նա ինձ մօտ այնպիսի խաբարներ է բերում, որ չգիտես ինչ անես: Զարմանում եմ որ մեր ուսուցիչներից շատերը մանրակրկիտ ձևասիրութեան հետ միասին թոյլ են տալիս իրանց ամենքի հետ այնպիսի մտերմութիւններ, որոնք եթէ մէկերի համար հաճելի են,

միւսներին համար անտանելի են: Գիտէք, մինչև հիմա էլ իմ տղէն ուշքի չի եկել անզգոյշ և բաւականի անվայել նկատողութիւններին, որ անուժ են նրան ուսումնարանում:

Դպրոցի երկրորդ դաստիարակիչ միջոցը— ուսումն է: Ուսումը պէտք է ազնւացնող և դաստիարակող աշխատանք լինի երեխի կեանքի համար: Ուսումը այն ժամանակ միայն դաստիարակող նշանակութիւն ունի, երբ տպւած նիւթը բաժանւած է այնպէս որ համապատասխանի երեխի զարգացման որոշ աստիճանին. դասը պէտք է կարելիին չափ ամբողջացած լինի: Այսպէս խելացի կերպով դասաւորելով ուսման նիւթը, կարելի է երեխաների վրայ բոլորովին բնական ճանապարհով պատուաստել շատ բարոյական յատկութիւններ:

Տարաբախտաբար իրականացնել այդ բանը միշտ կարելի չի լինում, մանաւանդ մեր հասարակական պայմանների մէջ: Այդ մանաւանդ նկատելի է տարրական ուսումնարանում:

Տարրական դպրոցը մտնում են 6, 7, 8 տարեկան հասակում (իսկ եթէ նրա հետ կից կայ մանկական պարտէզ— նաև 4, 5 տարեկան): Ֆիզիկական զարգացման նկատմամբ, մանաւանդ քաղաքի երեխաները մեծ մասամբ հիւանդ պտուղներ են, որոնք, բացի ժառանգական հիւանդութիւններից, կրում են նաև սիգբնական անփոյթ կրթութեան հետեւանքները:

Նշանաւոր է զանազանութիւնը գաւառականների ու քաղաքային երեխաների մէջ:

Առաջինները— առողջ, աշխույժ, մեծ մասամբ ընդունակ, — դրանք խելքին զօր չուող մայրերի զաւակներ են: Երկրորդները՝ զուճատ, սակաւարիւն, անտարբեր և սաստիկ յոգնած երեխաներ են: Ոկզբնական (տարրական) դպրոցը պէտք է ներկայացնի աշխատանք և հանգստութիւն: Նա պէտք է միջնակարգ դպրոցների նախադուռ լինի: Այնտեղ պէտք է բարոյական մարդու հիմք դրի խելացի կրթութեան միջոցով, այսինքն այդտեղ պէտք է երեխի մէջ արթնանան բարոյականութեան առաջին զաղափարները...

Մեր պայմաններում մեծ մասամբ մեր դործի է լինում ոչ թէ երեխաներին կրթել, այլ քիչ է մնում օրորոցից սկսած պատրաստենք նրանց ուսումնարանի համար: Մտողները չեն պահանջում, որ

նրանց տրւի ամենալաւ ու առողջ զարգացում, որ կրթւեն նրանց մարմնի, հոգու և սրտի բոլոր կողմերը,—ու, ծնողների միակ խնդիրքն է՝ գիմնազը մտնելու կանդիդատ թիււն իրանց երեխաները: Բերում են 6 կամ 7 տարեկան մի ինչ որ թոյլ, անզարգացած երեխայ, որը երկու խօսք իրար հետ կասել չգիտէ, և պահանջում են որ մի տարում պատրաստուի գիմնազը մտնելու: Որքան պէտք է խօսես, որ հասկացնես թէ նրանց թոյլ երեխան չի կարող տանել գիմնազական աշխատանքները և պայմանները:

Մեծամասնութիւնը մի՛ իդէալ ունի միայն—համազգեստը և պատրաստական դասարանը:

—Օհ, փառք Աստուծոյ, ասում է ձեզ բոլորովին գոհ վարժուհին, վերջապէս իմ փոքրիկները ճանապարհի վրայ ընկան: Այո, ևս արդէն պլան եմ կազմել, թէ ինչ անցկենամ նրանց հետ բարձր պատրաստականում: Ահա վեց ամիս է ինչ որ նրանք մտել են ուսումնարան և միայն հիմա նրանք բացել են և ընտելացել դպրոցի հետ...:

—Ձեր հրապուրելը զուր է, հիասթափեցնում էք դուք վարժուհուն. այդ երեխաներին ուղում են հէնց այս տարի գիմնազը տալ:

—Ախար այդ ինչպէս, չէ՞ որ նրանք դեռ շատ են մանր, ինչպէս են նրանք կարողանալու գիմնազական պահանջներին բաւարարութիւն տալ:

Հարցնում ենք՝ կարելի է արդեօք այդպիսի պայմաններում կանոնաւոր զարգացում տալ. կարելի է արդեօք թոյլ տալ անգամ դաստիարակութեան մասին մոռաճել: Եւ այդպիսի երեխան գիմնազում սկսում է բթանալ, զզւանք ստանալ դէպի ուսումը: Ժամը 8-ից մինչ 3-ը մնում է դպրոցում քաղցած, սկսում է ուշանալ դասերին, պատժել դրա համար մի կամ երկու ժամով, նոյնպէս քաղցած մնալով...

Ի՞նչ հարկ կայ 8 տարեկան երեխին գիմնազ տալ: Իմ կարծիքով դա անկանոն բան է 8 տարեկան երեխին ստիպել ամենախիտ կարգ ու կանոնով կեանք վարել:

Նոյն իսկ ինտելիգէնտ ծնողներից շատերը իրանց աշխատում են արդարացնել նրանով, որ իբր տեղի պակասութիւնից դժւար է

գիմնազում ընդունել տալ և այդ պատճառով աշխատում են օգուել հէնց որ հնարաւորութիւնը ներկայանում է:

Դպրոցը պէտք է կարելիին չափ խոյս տալ պատիժներից: Որքան յաճախ պատիժներով ստորացնում են երեխի սեպհական արժանաւորութեան զգացմունքը և սպանում են նրա մէջ ամօթի զգացմունքը! Ինչպէս խելացի մայրը կարող է մի պարզ և սրտալի խօսքով ազդել երեխի վրայ, այնպէս էլ վարժուհին կամ ուսուցիչը կարող են պարզ ու հասարակ վերաբերմունքով և խօսելու բնական ձևով կառավարել մի մեծ հանկական ամբոխ: Վարժուհին կամ ուսուցիչը զպրոցում հեղինակութիւն է, իսկ մեր դպրոցների երեխաների համար այդ հեղինակութիւնը դեռ աւելի է քան մօր ու հօր հեղինակութիւնը:

«Բաւական է իմ աղջկան յայտնեմ թէ այս ինչ բանը կասեմ վարժուհուն և ահա նա թողնում է իւր կապրիզները»:

—Դու ուրեմն վախենում ես որ քեզ չպատժեն, հարցնում է մայրը:

—Ոչ, մայրիկ, ամենեին ոչ, ես չեմ վախենում, բայց ես ամաչում եմ, ես չեմ ուզում որ վարժուհիս նեղանայ:

Ամենախիստ պատիժն անգամ չի ազդում երեխի վրայ այնքան որքան յարգած վարժուհու մի նկատողութիւնը:

—Ի սէր Աստուծու, խնդրում է մայրը վարժուհուն, իմացէք, Արամից թէ ուր է տարել նա հօրը փղոսկրէ կորիչը: Ես հաստատ գիտեմ որ նա հօռ սեղանից վերցրել է: Ես երէկ նրան հարց ու փորձ արեցի, հայրը մինչև անգամ նրան խփեց մի երկու անգամ, բայց չէ, չէ ու չէ. ոչ մի կերպ չի ուզում խոստովանել:

—Արամ, հարցնում է վարժուհին, իսկն ասա, ումն ես տւել կորիչը:

Երեխան գլուխը կորացրեց և լռեց:

—Երեւի դու գիմնազում կորիչը փոխել ես ուրիշ բանի հետ, ընկերներիդ մօտ?

—Այո, ասում է նա արտասուք թափելով...

Իմ կարծիքով աւելի լաւ է բարկանալ երեխի վրայ, կատաղել, չիշոցներ տալ նրան, ինչպէս այդ կ'անէր մայրը բարկացած ըոպէին, քան բոլոր ոյժերը հաւաքել ու փքւել ու վերելից նայելով բարոյա-

խօսութիւն կարդալ երեխին։ Երեխան իմանալով ձեր մօտիկ և բնական չարաբերութիւնը դէպի նա, դիտէ որ եթէ դուք այժմ արժանի կերպով բարկանում էք նրա վրայ, մի ալլ անդամ, երբ նա արժանի կլինի՝ դուք կը ժպտաք ու կը շոյէք նրան։ Բայց երբ դուք միշտ և ամեն տեղ հաւասար կերպով փքւած էք և լուրջ, — երեխան կզգայ իրան անմատչելի դէպի ձեզ։ Ես նկատել եմ որ յաճախ ծնողները, երեխաների և ուրիշների աչդպիսի վերաբերմունքի ազդեցութեան ներքոյ, իրանք էլ են վարակւում դրանով և չեն վստահանում երեխաների յառաջդիմութեան մասին դիմել դաստիարակներին։ Որ անկեղծ ու պարզ վերաբերմունքը անհամեմատ աւելի բարձր է քան բարոյախօսութիւնը, այդ ես կարող եմ օրինակով բարձր է քան բարոյախօսութիւնը, այդ ես կարող եմ օրինակով հաստատել։ Իմ սլանսիոնը բերել էին Երեւանից Ծ տարեկան մի տղայ, որը ազատ մեծացել էր և սովոր էր միայնակ ճամբորդել Երեւանից մինչ 15 վերստ հեռաւորութեան վրայ գտնուող գիւղը, մասամբ ոտով, մասամբ ձիով (եթէ, ինչպէս ինքն էր ասում, բարի մարդիկ էին գտնուում)։ Նա մտաւ ինձ մօտ ուսումնասրան առանց արտասուքի ու առանց ղալմաղալի, բայց հէնց որ ամենքը նստեցին նախաճաշի — նա հազաւ գդակը և ուր որ անհետացաւ։ Կարող էք երեւակայել. թէ ինչ վրդովմունք եղաւ ամբողջ դպրոցում! Տղէն ամենեւին էր ճանաչում քաղաքը և առաջին անգամն էր դուրս գալիս փողոցը։ Ամբողջ օրը մենք տարսափելի վրդովմունքի մէջն էինք։ Մենք ամեն միջոցի դիմեցինք և արդէն պատրաստուում էինք ոստիկանութեանը իմաց տալ, որ մեր Ա. Լ. ոնը ներս մտաւ։

— Ուր էիր և ինչու գնացիր։

— Այնպէս, ես գնացի ցուցահանդէս։ Ինչ լաւ է այնտեղ!

Ես հաւաքեցի իմ ամբողջ օրը խանդարւած նեարդերը և աշխատեցի հանդարտ տոնով բացադրել նրան, թէ ինչպէս ես տխրել էի։ Երեխան ինձ խօսք աւելց ևս երբէք չկրկնել այդ։ Բայց յաջորդ օրը, բոլոր գտնելով, նա նորից ուր որ փախաւ։

Ես իմ գլուխը բոլորովին կորցրի։

Այդ անգամ նա վերադարձաւ մի ժամից յետոյ և յայտնեց թէ նա ուզում էր պալատը տեսնել։

Թէև նա նորից խոստացաւ այլ ևս աչդպիսի բան չանել, բայց ես ոստիկանական պահապանին խնդրեցի մեր տունը գալ, մտնել

սկսեալը և հարցնել թէ արդեօք չենք ճանաչում մի տղայ, որը մենակ շրջում է փողոցներում, և որ եթէ նա որք է և տուն չունի, այն ժամանակ պէտք է նրան վերցնել ապաստանարանը:

Ըստ երևութիւն՝ տպաւորութիւնը կատարեալ էր:

— Ես ամենեւին որք չեմ, ասաց երեխան: Տեօտեա (ինձ այսպէս էին կանչում), թող այս մարդը գնայ, ես այլ ևս դուրս չեմ փախչիլ:

Ես այժմ բոլորովին հանգստացայ: Բայց մի երեք օրից յետոյ, չնայած մեր հսկողութեան, նա հնարք գտաւ նորից փախչելու: Ես արդէն կատաղեցի և մոռացայ մանկավարժական ամեն մի տաքսիկան: Երբ ծառան նրան ներս բերաւ, ես յարձակեցի վրան և արտասուքի մէջ բղաւեցի՝ ամօթ է, ամօթ այդպէս ինձ տխրեցնել և չարչարել: Լաւ, այսուհետեւ զիտեմ թէ ինչպէս պէտք է քեզ հաւատալ... Աւելին ես չկարողացայ խօսել: Տղէն նոյնպէս ընկնում է վրաս և լաց լինելով աղաչում է—«Տեօտեա, հոգիս, մի լաց լինիր, եթէ մի անգամ էլ գնամ՝ ինձ բոլորովին դուրս արա»:

Եւ իրօք, այդ օրից նրա վերաբերմունքը դէպի ինձ վերին աստիճանի քնքոյշ դառաւ: Ուրեմն եթէ դպրոցը իւր բնական և պարզ վերաբերմունքով դէպի երեխերքը կարող է այդպիսի իշխանութիւն ձեռք բերել երեխաների սրտերի վրայ, ուրեմն ինչ զօրեղ զէնք կայ դպրոցի ձեռքում և ինչ վիթխարի ոյժ ունի նա, և որքան ուրեմն անհրաժեշտ է որ ընտանիքը և դպրոցը ձեռք ձեռքի տուած ընթանան: Ուրեմն էլ ինչ է մնում ուսումնարանին? Մի բան միայն. զգալով ընտանիքի անկանոն կրթութիւնը—զալ ընտանիքի օգնութեանը և անհամեմատ աւելի մօտ լինել երեխային և նրա շրջապատին: Թող մի՛ սրտով դպրոցն ու ընտանիքը դիմեն վերջնական նպատակին: Թող ընտանիքը վերաբերւի դէպի դպրոցը աւելի մեծ հաւատով և աւելի անկեղծօրէն, իսկ դպրոցը թող անմատչելի չմնայ և ընտանիքի հետ հաւասար հողի վրայ կանգնի: Մեր երեխաները լիակատար ազատութեամբ ապրում են միայն մինչ 8 տարեկան հասակը, իսկ 8-ից անց՝ նրանք մեքենայ են դառնում: Ութ ժամից մինչ 2-ը նրանք դպրոցում են. տուն վերադարձած՝ նրանցից շատերին սպասում է ֆրանսուհին, որը ճաշի վրայ պէտք է ֆրանսերէն խօսակցութիւնով զբաղեցնէ: Ճաշից յետոյ զալիս է երաժշտութիւնը,

որից յետոյ ժամ 5-ին նստում է բեպետիտորի հետ դաս սերտելու յաջորդ օրւայ համար: Եւ այսպէս ամեն օր:

Մեզանում 100 աշակերտներից միայն կէսն է իւր դասերը ինքը պատրաստում: Թող դպրոցն ու ընտանիքը միասին աշխատեն մաքրել փողոցները բուլւարական կոմիտէտի փողրիկ անդամներից: Երեխաներից ոմանք լարւած մեքենայի պէս առաւօտանից մինչ երեկոյ վազվզում են տանից դուս. միւսներն էլ՝ անգիր անելով դասերը գնում են դպրոց, վերադառնում են տուն, շտապով ճաշում են և վազում, ուր? Բուլւարը...

Դպրոցը ընտանիքի հետ միացնելու համար ամենից առաջ հարկաւոր է հիմնել ծնողական շրջան, որտեղ ծնողները կարողանային պատահել իրանց որդիկրանց դաստիարակների հետ և միասին խորհել դպրոցի այս ու այն պակասութիւնների մասին: Դպրոցը, այսինքն ուսուցիչները կամ վարժուհիները պէտք է նւիրեն երեխաներին շաբաթական կամ թէկուզ ամսական գէթ մի ազատ երեկոյ, ընդհանուր ընթերցումներ, ներկայացումներ և խաղեր սարքելու համար, որոնք մեծ օգուտ կը բերեն դպրոցին և շատ կը մօտեցնեն դպրոցը ընտանիքին:

Ինձ թւում է, որ սկզբնական դպրոցները կարող են ձեռք բերել իրաւունք և կանոնաւոր պայմաններ միայն պաշտօնական բնակարանութիւն կրող դասախօսութիւններով, որովհետեւ մասնաւոր խօսակցութիւնները միանգամայն այլ բնակարանութիւն են ստանում: